ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի կամավոր
ատեստավորման քննության թեստի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ..... .4
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՏԻՊԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ
ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 6
ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ
ՆՅՈՒԹԸ.....9
ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ.....10
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ.....12

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2023 թ. պատմություն («Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաները) դասավանդող ուսուցիչների կամավոր ատեստավորման քննական թեստի կառուցվածքը, պատասխանների ձևաթուղթը և դրա լրացման կարգը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները,ինչպես նաև առաջադրանքներից դուրս մնացած նյութերը: Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվել «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների հանրակրթական դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի ծրագրերը, դրանց համապատասխան 10-12-րդ դասարանների դասագրքերը:

I. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստի առաջադրանքների քանակը 70 է, որից 40-ը ընտրովի պատասխանով առաջադրանքներ են, իսկ 30-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքներ:

Ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

«Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաներից թեստում կներառվեն առարկայական ծրագրերի գրեթե բոլոր թեմաները: 70 առաջադրանքներից 42-ը կլինեն «Հայոց պատմություն» առարկայից, իսկ 28-ը՝ «Համաշխարհային պատմություն» առարկայից:

Թեստի առաջադրանքների կատարման համար կտրամադրվի 180 րոպե:

II. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Ընտրովի պատասխանով առաջադրանքները ներկայացված են հետևյալ 5 տիպերով.

1. Սկզբնաղբյուրների իմացությունը ստուգող առաջադրանքներ,
2. Պատմական տերմինների և հասկացությունների իմացությունը ստուգող առաջադրանքներ,
3. Պատմական փաստարկների, պնդումների համադրման և խմբավորման կարողությունը ստուգող առաջադրանքներ,
4. Պատմական իրադարձությունների, երևույթների պատճառների և հետևանքների իմացությունը ստուգող առաջադրանքներ,
5. Պատմական իրադարձությունների, երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացությունը ստուգող առաջադրանքներ:

Կառուցվածքը: Ձևակերպվում է հարցը և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը: Ճիշտ

պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Ձևաթուղթը լրացնելու կարգը: Պատասխանների ձևաթղթում ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված են համապատասխան թվով վանդակներ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ՝ եթե առաջին առաջադրանքի ճիշտ պատասխանը 3-րդն է, ապա ձևաթղթում պատասխանը պետք է նշել հետևյալ ձևով՝



2. Կարճ պատասխանով առաջադրանքների կառուցվածքը և ձևաթուղթը լրացնելու կարգը

Կարճ պատասխանով առաջադրանքները ներկայացված են առաջադրանքների հետևյալ 4 տիպերով

1. Պատմական տերմինների և հասկացությունների իմացությունը ստուգող առաջադրանքներ,
2. Պատմական փաստարկների, պնդումների համադրման և խմբավորման կարողությունը ստուգող առաջադրանքներ,
3. Պատմական իրադարձությունների, երևույթների պատճառների և հետևանքների իմացությունը ստուգող առաջադրանքներ,

4. Պատմական իրադարձությունների, երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացությունը ստուգող առաջադրանքներ:

Կառուցվածքը: Տրված են ժամանակագրական հաջորդականության, բոլոր ճիշտ պատասխանների ընտրությամբ, բոլոր սխալ պատասխանների (երեք կամ չորս) ընտրությամբ առաջադրանքներ: Դրանց ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը պետք է տեղադրել ձևաթղթի համապատասխան վանդակներում:
Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Ներկառուցվածքային տարատեսակները

ա. Ճիշտ հաջորդականության ընտրությամբ առաջադրանքներ: Տրված է անունների կամ իրադարձությունների 6 կամ 7 շարք, որոնցից անհրաժեշտ է լրացնել տրված անունների կամ իրադարձությունների համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն:
Ձևաթուղթը լրացնելու կարգը: Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է ըստ հաջորդականության գրել ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը՝ նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ:
Օրինակ՝ եթե առաջադրանքի պատասխանը 2-5-1-4-6-3-ն է, ապա այն պետք է լրացնել հետևյալ ձևով՝

2	5	1	4	6	3

բ. Բոլոր ճիշտ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ: Տրված են պատմական տերմիններ, փաստարկների, պատճառահետևանքային կապերի վերաբերյալ պնդումներ, որոնցից անհրաժեշտ է ընտրել բոլոր ճիշտ պատասխանները:

Ձևաթուղթը լրացնելու կարգը: Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել առաջադրանքի պահանջին բավարարող ***բոլոր*** ճիշտ պատասխանների համարները՝ պատասխանին համապատասխանող հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ:
Օրինակ՝ եթե առաջադրանքի պատասխանը 1-3-5-ն է, ապա այն պետք է լրացնել հետևյալ ձևով՝

1	3	5

գ. Բոլոր սխալ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ: Տրված են պատմական տերմինների, փաստարկների, պատճառահետևանքային կապերի վերաբերյալ պնդումներ, որոնցից անհրաժեշտ է ընտրել ***բոլոր*** սխալ պատասխանները:
Ձևաթուղթը լրացնելու կարգը: Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել առաջադրանքի պահանջին բավարարող սխալ պատասխանների համարները՝ պատասխանին համապատասխանող հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ:
Օրինակ՝ եթե առաջադրանքի պատասխանը 245-ն է, ապա այն պետք է լրացնել հետևյալ ձևով՝

2	4	5

Ձևաթղթում տրված է սխալն ուղղելու 5 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 3-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար: Եթե անհրաժեշտ է փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի սխալ նշած պատասխանը, ապա նախատեսված դաշտի վերևի հորիզոնական վանդակում կամ վանդակներում պետք է գրել առաջադրանքի համարը, իսկ նրանից ներքև ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը:



Կարճ պատասխանով առաջադրանքների սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում հորիզոնական վանդակներում պետք է գրել առաջադրանքի համարը, որից հետո համապատասխան վանդակներում լրացնել ճիշտ պատասխանը՝ կարճ պատասխանի լրացման սկզբունքով:

IV. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

1. Հայոց պատմություն, ավագ դպրոցի 10-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, խմբ.՝ Ա. Մելքոնյան, Ա. Սիմոնյան և Ա. Նազարյան, «Զանգակ» հրտ., Եր., 2021:

2. Հայոց պատմություն, ավագ դպրոցի 11-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, խմբ.՝ Ա. Մելքոնյան, Ա. Սիմոնյան և Ա. Նազարյան, «Զանգակ» հրտ., Եր., 2022:

3. Հայոց պատմություն, ավագ դպրոցի 12-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, խմբ.՝ Ա. Մելքոնյան, Ա. Սիմոնյան և Ա. Նազարյան, «Զանգակ» հրտ., Եր., 2016:

4. Համաշխարհային պատմություն, ավագ դպրոցի 10-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, խմբ.՝ Ա. Քոսյան, Ա. Նազարյան, «Զանգակ» հրտ., Եր., 2017:

5. Համաշխարհային պատմություն, ավագ դպրոցի 11-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, խմբ.՝ Ա. Քոսյան, Ա. Նազարյան, «Զանգակ» հրտ., Եր., 2017:
6. Համաշխարհային պատմություն, ավագ դպրոցի 12-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք, խմբ.՝ Ա. Քոսյան, Ա. Նազարյան, «Զանգակ» հրտ., Եր., 2018:

V. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա ՄԱՍ	Բաժին 1. Նախնադարյան հասարակությունը Հայաստանի տարածքում:
Բ ՄԱՍ	Բաժին 3. Հայոց քաղաքակրթությունը ուշ միջնադարում:
Գ ՄԱՍ	Բաժին 2, գլուխ 1. Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը:
Գ ՄԱՍ	Բաժին 3, գլուխ 3. Հայկական գաղթավայրերի դերը հայապահպանության և մշակույթի զարգացման գործում:
Դ ՄԱՍ	Բաժին 1, գլուխ 3, § 2. Սոցիալիստական հասարակարգի հակասությունների սրումը:
Դ ՄԱՍ	Բաժին 2, գլուխ 1, § 2. Սոցիալ-տնտեսական դրությունը:
Դ ՄԱՍ	Բաժին 3, գլուխ 3. Հայկական սփյուռքը արդի փուլում:
Դ ՄԱՍ	Բաժին 4, գլուխ 3. Հայկական մշակույթի արդի վիճակը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1	Գլուխ Գ, § 3. Գիրը և գրականությունը:
ՄԱՍ 1	Գլուխ Դ, § 4. Արևելքի երկրները հելլենիստական դարաշրջանում:
ՄԱՍ 1	Գլուխ Դ, § 5. Չինաստանը և Հնդկաստանը նոր հազարամյակի սկզբին:
ՄԱՍ 2	Գլուխ Ա, § 5. Վաղ միջնադարի մշակույթը:
ՄԱՍ 2	Գլուխ Բ, § 2. Սոցիալական միջավայրի վերակառուցումը դասական միջնադարում:
ՄԱՍ 2	Գլուխ Բ, § 3. Դասային միապետության առաջացումը:
ՄԱՍ 2	Գլուխ Բ, § 4. Դասական միջնադարի մշակույթը:Վաղ

	վերածնունդը Իտալիայում:
ՄԱՍ 2	Գլուխ Գ, § 1. Հինդու քաղաքակրթությունը:
ՄԱՍ 2	Գլուխ Գ, § 2. Չինաստանը միջնադարում:
ՄԱՍ 2	Գլուխ Գ, § 3. Ճապոնիան միջնադարում:
ՄԱՍ 3	Գլուխ Ա, § 1. Աշխարհը նոր ժամանակների սկզբին:
ՄԱՍ 3	Գլուխ Ա, § 2. Արդյունաբերական քաղաքակրթության առաջացման եվրոպական ուղու առանձնահատկությունները:
ՄԱՍ 3	Գլուխ Ա, § 3. Ժողովրդավարության ձևավորման գործընթացը:
ՄԱՍ 3	Գլուխ Բ, § 2. Արաբական երկրները նոր ժամանակներում:
ՄԱՍ 3	Գլուխ Բ, § 5. Գաղութային համակարգը:
ԲԱԺԻՆ 1	Գլուխ Ա, § 1. Միջազգային հարաբերությունները XVII դարից մինչև նապոլեոնյան դարաշրջանի ավարտը:
ԲԱԺԻՆ 1	Գլուխ Ա, § 2. Միջազգային հարաբերությունները 1814-1860-ական թվականներին:
ԲԱԺԻՆ 2	Գլուխ Ա, § 2. Եվրոպակենտրոն աշխարհն ու հոգևոր ճգնաժամը:
ԲԱԺԻՆ Ա	Գլուխ 2, § 4. Ազգերի ինքնորոշման հիմնախնդիրն ու չճանաչված պետությունները:
ԲԱԺԻՆ Ա	Գլուխ 2, § 5. Աշխարհի ժողովրդավարացման գործընթացը:
ԲԱԺԻՆ Ա	Գլուխ 3, § 3. Քաղաքակրթության զարգացման հեռանկարները XXI դարում:

VI.ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

2023թ. Ուսուցչի առարկայական գիտելիքի ստուգում

Պատասխանների ձևաթուղթ

Պատմություն

ազգանուն

անուն հայրանուն

ԳԹԿ անձնական համար

07

Թեստ № 1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	1
2	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	2
3	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	3
4	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	4

	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	
1	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	1
2	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	2
3	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	3
4	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	☐	4

Կարճ պատասխանով առաջադրանքներ

41 ☐☐☐	46 ☐☐☐	51 ☐☐☐	56 ☐☐☐	61 ☐☐☐☐
42 ☐☐☐	47 ☐☐☐	52 ☐☐☐	57 ☐☐☐	62 ☐☐☐☐
43 ☐☐☐	48 ☐☐☐	53 ☐☐☐	58 ☐☐☐	63 ☐☐☐☐
44 ☐☐☐	49 ☐☐☐	54 ☐☐☐	59 ☐☐☐	64 ☐☐☐☐
45 ☐☐☐	50 ☐☐☐	55 ☐☐☐	60 ☐☐☐	

65 ☐☐☐☐☐☐	67 ☐☐☐☐☐☐☐	69 ☐☐☐☐☐☐☐
66 ☐☐☐☐☐☐	68 ☐☐☐☐☐☐☐	70 ☐☐☐☐☐☐☐

Միայն նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի

1	☐	☐
2	☐	☐
3	☐	☐
4	☐	☐

Կարճ

☐☐ ☐☐☐

☐☐ ☐☐☐☐

☐☐ ☐☐☐☐☐☐☐

Լրացրեք այս նախադասությունը՝ Ծանոթ եմ ուսուցչի առարկայական գիտելիքի ստուգման աշխատակարգին: